

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի հուլիսի 3-ի N 5 - Լ

Հիմք ընդունելով ՀՊՄՀ էլեկտրոնային հարթակի գնահատման համակարգի բարելավման ուսանողական նախաձեռնության և նրա հանձնաժողովի, ՀՊՄՀ ռեկտորատի 2018 թվականի փետրվարից սկսված քննարկումները և աշխատանքի բարելավմանը միտված մոտեցումները, discussion-classroom@aspu.am խմբի էլ. հասցեում ՀՊՄՀ ուսանողների, դասախոսների, բաց քննարկման և առաջարկությունների հավաքագրման արդյունքները, ինչպես նաև քննարկելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում կրթության էլեկտրոնային կառավարման Google Classroom հարթակի շուրջ վերջին զարգացումների մասին ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ Մկրտիչ Ավագյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը հավաստում է՝

ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակը հանդիսանում է համալսարանի ձեռքբերումը: Ուստի և համալսարանը շարունակելու է համակարգի կիրառումը՝ բարելավելով և զարգացնելով այն:

ՀՊՄՀ-ն էլեկտրոնային ուսուցման հարթակը համալսարանի ուսանող-դասախոս հաղորդակցական գլխավոր հարթակն է, որի առաջնային գործառնությունն է ուսանողների մոտ ստեղծագործականության, քննական մտածողության, ինքնուրույնության խթանումն ու զարգացումն է՝ մասնագիտական կրթական ծրագրում առկա դասընթացների կրթության բովանդակության շրջանառման, դասընթացի տեղեկատվական, կազմակերպչական, ուսումնական և հետազոտական աշխատանքների համակարգման, անհրաժեշտ հիմնական և օժանդակ ժամանակակից գրականության տրամադրման և ՄԿԾ դասընթացների էլքային արդյունքներից բխող այլ գործառնությունների կիրառմամբ:

Ելնելով վերոգրյալից **Գիտական խորհուրդը որոշում է՝**

Գնահատվող էլեկտրոնային հանձնարարությունների վերաբերյալ

1. ՀՊՄՀ էլեկտրոնային հարթակում մեծաքանակ հանձնարարությունների տրամադրումը ուսանողներին համարել ոչ նպատակահարմար,
2. Հանձնարարել ՀՊՄՀ ամբիոններին.

2018/19 ուս. տարվանից ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակում ուսանողներին տրվող հանձնարարությունները անմիջականորեն բխեցնել ուսումնական տարվա սկզբին ամբիոնում հաստատված առարկայական նկարագրի թեմատիկ տրոհման մեջ ամրագրված ուսումնառության մեթոդաբանական բաժնի պահանջներից հանձնարարականի տրամադրումը՝ պայմանավորվել կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքներով և ամբիոնի հաստատած որոշմամբ պայմանավորված առարկայի ուսուցման առանձնահատկություններով:

3. Դասընթացի շրջանակներում գնահատվող առաջադրանքների կիրառման մասին որոշումները կայացնել միայն ամբիոնների նիստերում քննարկման և հաստատման արդյունքում՝ առարկայի շրջանակում գնահատվող առաջադրանքի անհրաժեշտության մասին դասախոսի գրավոր հիմնավորմամբ՝ ցույց տալով այդ առաջադրանքի տեղը թեմատիկ տրոհման մեջ, տվյալ առաջադրանքի գնահատման հստակ

չափանիշներն ու մեխանիզմները, ինչպես նաև այն, թե ինչպես է գնահատվող առաջադրանքը արտացոլվում ուսանողի ընդհանուր գնահատման բաղադրիչներում:

Էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ.

4. Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից Google Classroom հարթակում դասախոսների գործունեության մշտադիտարկումը և էլեկտրոնային աշխատանքի գնահատումը այսուհետ համարել ոչ նպատակահարմար,
5. Հանձնարարել ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը մինչև ա/թ սեպտեմբերի 15-ը վերակարգավորել բաժնի գործառույթները համալսարանում էլեկտրոնային կրթության կազմակերպման մեթոդական օգնության, աջակցության և աշխատանքների կոորդինացման և կառավարման տիրույթում,
6. 2018/19 ուս տարվանից ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակում էլեկտրոնային ուսուցման համակարգի հստակ իրավիճակի, այնտեղ հարթակում դասախոսների գործունեության մշտադիտարկման և էլեկտրոնային աշխատանքի գնահատման գործառույթները դնել ամբիոնների վրա,
7. Հանձնարարել ՀՊՄՀ ամբիոններին յուրաքանչյուր կիսամյակ երկու անգամ, ամբիոնի նիստերում քննարկել դասավանդվող դասընթացների էլեկտրոնային ԱՌԻՄՓ-ները և ուսումնական նյութերը, ուսանող դասախոս էլեկտրոնային հաղորդակցական վիճակը և խնդիրները մշտապես դարձնելով ամբիոնների նիստերում քննարկման առարկա,
8. Ուսումնական կիսամյակի սկզբին՝ օգոստոս-հունվար ամիսներին քննարկել և հաստատել դասընթացների էլեկտրոնային ԱՌԻՄՓ-ն, հանձնարարականի տրամադրումը /ըստ անհրաժեշտության՝ պայմանավորված կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներով և առարկայի ուսուցման առանձնահատկություններով: Դասախոսի գրավոր հիմնավորման դեպքում հաստատել կիրարկվող գնահատվող առաջադրանքը, ցույց տալով այդ առաջադրանքի տեղը թեմատիկ տրոհման մեջ, տվյալ առաջադրանքի գնահատման հստակ չափանիշներն ու մեխանիզմները, ինչպես նաև այն, թե ինչպես է գնահատվող առաջադրանքը արտացոլվում ուսանողի ընդհանուր գնահատման բաղադրիչներում:
9. Ուսումնական կիսամյակի ավարտին՝ հունվար-հունիս ամիսներին լսել դասախոսների հաշվետվությունը, տարեսկզբին հաստատված էլեկտրոնային ուսուցման գործառույթներին համապատասխան, գնահատել աշխատանքը և բարելավել այն,
10. Հանձնարարել ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը ՀՀ <<Կրթության մասին>> օրենքի 28 հոդված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ դասախոսների դասավանդման արդյունավետությունը գնահատող հարցումների շրջանակում ընդգրկել նաև հարցեր ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակում դասախոսի և նրա կատարած աշխատանքի մասին՝ ուսանողի կողմից գնահատման նպատակով,
11. Հանձնարարել ՀՊՄՀ Իրավաբանական կենտրոնի ղեկավարին և Անձնակազմի հաշվառման բաժնին 2018/19 ուս. տարվանից պարտադիր համարել դասախոսների հետ կնքված պայմանագրերում նշումը, որ ՀՊՄՀ դասախոսը, ասիստենտը, դոցենտը և պրոֆեսորը պետք է իրականացնի ուսումնական պարապունքների վարում Google Classroom էլեկտրոնային հարթակում:

